

Ատրպատականի նուաճումն:

(2647, 2660—64.)

Աբու Ջաֆար կը պատմէ, թէ Ատրպատական նուաճեցաւ 22 թ. նոյնպէս ինձ աւանդել է ԱՏ-մէդ Ի. Ջարիտ Առուաղի բստ Իսհակ Ի. Այսիի, բստ Աբու Մաշարի՝ թէ Ատրպատական նուաճեցաւ 22 թ., ուր կառավարեց Մուղէյրայ Ի. Շոբայ. նոյնն կը հաստատէ եւ Վակիդին: Իսկ Սայիֆ Ի. Օմար կը պատմէ, թէ այս դէպքը տեղի ունեցաւ 18 թ. Համադանի, Ռայի եւ Ջորջանի նուաճումից յետոյ:

Նուայմ՝ հպատակեցնելով Համադան՝ արշաւեց Ռայ, որ Վաջի-լ-Ռուդի մէջն է: Օմար գրեց նորան, որ նա Սիմակ Ի. Խարաշայ Անարիին ուղարկէ Ատրպատական՝ Բուկէյր Ի. Աբդուլլահին օգնութեան. Նուայմ սակայն սպասեց, մինչեւ գրաւեց Ռայ, ապա արձակեց Սիմակին, որ գնաց Բուկէյրի մօտ Ատրպատական, երբ սա արդէն իւր արշաւանքն սկսել էր: Երբ Բուկէյր Ջարմիդան մտաւ, նորան գիմաւորեց Իսֆանդիար Ի. Ֆառուխ-զատ՝ անցնելով Վաջի-լ-Ռուդից. այս եղաւ առաջին ձակատը Ատրպատականում. Երկու զորագնդեր իրարու բախեցան. Աստուած ի փախուստ դարձրեց թշնամու զօրքը, եւ Բուկէյր գերեց Իսֆանդիարին, որի հետ միասին նա շրջեց նորա գաւառները, բաց ի ամրոցավայրերից: Այս ժամանակ նորան հասաւ Սիմակ Ի. Խարաշայ օգնական գնդով, նուաճելով շրջակայ գաւառները, որպէս Օտբայ Ի. Ֆարքադ հնազանդեցրել էր իրեն ձանապարհի վերայ գանուղ երկրները:

Գորանից յետոյ Բուկէյր խնդրեց Օսմանին՝ իրեն արձակել պաշտօնից. Օմար տուեց իւր համաձայնութիւնն այն պայմանով, որ նա՝ նշանակելով իրեն փոխանորդ՝ արշաւէ Գարբանդ: Բուկէյր դրեց Օտբային երկրի վերայ կուսակալ եւ՝ յանձնե-